«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ «Ազգային տոների, ծեսերի կազմկարերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Հաստատություն ՝ Երևանի թիվ 148 մանկապարտեզ

Դաստիրակ ՝ Արևիկ Մինասյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Թեմա ----------4

Դասի պլան ----------11

Եզրակացություն ----------15

Օգտագործված գրականություն ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության և դաստիարակության շարունակական բարեփոխումներն անհրաժեշտ է նպատակաուղղելազգային պետականության ամրապնդմանը և ազգային գիտակցության ու պետական մտածողությամբ օժտված քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Այդ նպատակով էլ կորևորում եմ նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցումը հայ ժողովրդի ազգային տոներին ու ծեսերին, հարուստ մշակույթին: Մենք՝ մանկավարժներս ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի ու քրիստոնեաբար:

Հայ երեխային հայեցի կրթության ու դաստիարակություն, ազգային ավանդույթների իմացությունը այնքանանհրաժեշտ է որքան Մեսրոպյան այբուբենը Հայոց լեզուն իմանալու համար:

Հայ երեխայի հոգում բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Թեմա՝

Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Նախադպրոցական հաստատությունում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում գրավիչ ժամանցները, տոնահանդեսները մարզական զվարճությունների ու ազգային տոների ու ծեսերի իրականացումն ու անցկացումը:

Մնակավարժության բազմաթիվ հարցումների շարքում առանձնանում է երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը: Եթե առաջնորդվենք որ կրթության մեջ կարևոր խնդիրներից մեկը երեխայի երեխայի անհատականությունը պահպանելն է ու նրա ճաշակը զարգացնելը, ապա միջոցառումների կազմակերպումը պահանջում է նոր մոտեցումներ. Միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունը պետք է հասունանա ոչ թե պարտադրանք ու հոգս դառնա երեխայի համար: Երեխան պետք է սպասի այդ տոնին:

Տոներին, զվարճանքներին ու ծեսերին պետք է մասնակցեն բոլորը: երեխան անչափ ոգևորվում է երբ իր կողքին տեսնում էերգող մեծահասակներին ու ընկերներին: Երկարատև վարժանքների ու փորձերի կարիք չկա: Կարևոր է որ այդ երեխաները պարզապես միասին նշեն, հաճույք ստանան, պատմեն միմյանց, թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում: Այդպիսով նրանք տնից ուսումնական հաստատություն և ուսումնական հաստատությունից տուն են փոխանցում տոնը, ծեսը: Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվության սպառող այլ նաև այլ նաև տեղեկատվության աղբյուր:

Երեխաների համար կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ, մարզական խաղ և զվարճությունը նպաստում են երեխաների գիտելիքների հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը: Մանկապարտեզում անցկացվող ազգային տոներից՝ ծեսերից են (Նոր տարի, Ամանոր, Տրնդեզ, Բարեկենդան, Զատիկ, Սուրբ Զատիկ, Համբարձման տոն և Ծաղկազարդ): Երեխայի

աշխարհընկալման, հայրենաճանաչողության, գեղագիտական ճաշակի ձևավորման տեսակետից առանձահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ծեսերը, սովորույթները, տաղավար տոներին նվիրված միջոցառումները: Ինչ ծավալի էլ լինի միջոցառումը, միևնույնն է երեխան կամա թե ակամա դառնում է դրա մասնակիցն ու դիտորդը:

Փորձը ցույց է տալիս, որ երեխային գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ազգային ընտանեկան միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող:

Առանձնակի հետաքրքիր են անցնու մ Սուրբ ծնունդն ու Ամանորը, Զատիկը, Ծաղկազարդը:

Ծաղկազարդ

Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը նվիրված է եղել ջրի և անձրևի աստվածուհի Նարին: Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր: Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում Նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին: Գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբին ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է, որին հաջորդում է Ավագ շաբաթը. Նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի Երուսաղեմ մտնելու օրվան:

Այդ օրը նշանավորում է Հիսուս Քրիստոսի տանջանքների ու տառապանքների շաբաթվա սկիզբը, որ Նա կրեց՝ Իր վրա վերցնելով մարդկության մեղքերը: Ծաղկազարդի օրը Հայ եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, կատարվում է ժամերգություն, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին: Ծաղկազարդի օրը հռչակված է որպես մանուկների օրհնության օր:





Համբարձման տոն

Այս տոնը սահմանվել է ի հիշատակ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի: Քրիստոսը խաչելությունից 3 օր անց հարություն է առել և իր աշակերտներին 40 օր այցելելուց հետո: Համբարձման տոնը նշվում է Զատիկից 40 օր հետո: Ըստ Ավետարանի Քրիստոսը հարություն առնելուց հետո 40 օր շրջում է երկրի վրա և ապա համբառնում:

Համբարձման տոնին ծաղիկներ ենք հավաքում, պսակներ հյուսում, 7 աղբյուրից ջուր վերցնում: Առավոտյան երեխաները երգելով Ձանգյուլամի երգերը՝ մեծերի ուղեկցությամբ այցելում են 7 տուն: Յուրաքանչյուր տան բակում երգում են Ձանգյուլամի մաղթանքները՝ վերցնում ծաղկաբաժինը (կոնֆետ, միրգ) ու բռնում ծաղկաշատ դաշտի ճանապարհը: Երեխաները շրջան կազմած նստում են ծաղիկների մեջ, իսկ մի աղջիկ հերթով հանում է երեխաների գցած վիճակները: Սկսվում է խաղիկների արտասանությունը, որոնք նման են ազգային, ժողովրդական խաղիկներին: Միջոցառումը ավարտվում է տերունական աղոթքով, երեխաները հստակ պատկերացնում են համբարձման տոնի իմաստը և գիտակցում դրա խորհուրդը:





Սուրբ Զատիկի տոնակատարությունը որպես հայեցի դաստիարակության յուրահատուկ միջոց

Քրիստոնեական տաղավար տոներից մեկը՝ Զատիկը մանկապարտեզում վերածվում է շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դասիարակության հրաշալի օրինակ է: Կարևոր է պահպանել ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնել դրա բովանդակությունն ու խորհուրդը:

Զատիկը կամ Սուրբ Հարության տոնը, հեթանոսական տոն լինելով հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը և բեղմնավորումը : Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն և կենաց ծառը: Հետագայում այս տոնը քրիստոնեական օրացույցում արժևորվեց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ: Արդեբ երկու հազարամյակ աշխարհի մարդիկ Սուրբ Զատիկի օրը իրար ավետում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և պատասխանը լինում է «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»: Այս տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ կենցաղային ավանդույթներ, հայկական ուտեստեների պատրաստման և հյուրասիրման տարրերը: Միջոցառման անցկացումը տևում է մեկ շաբաթ: Բուն Զատիկը կատարվում է շաբաթվա վերջում՝ կիրակի օրը:

Տոնակատարությունը և մեծերի և փոքրերի համար է: Դրա հիմնական մասնակիցները դառնում են մանկապարտեզի աշխատակիցները, ծնողները, տատիկները, երեխաները:

Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները պատրաստում են Զատիկի թեմաներով բացիկներ կոլաժներ, բացիկներ: Նկարում են նկարներ:

Ավատ երեքշաբթի, զբոսանքի ժամանակ երեխաները մոտակա պուրակից բերում են ուռենու ճյուղեր `տոնակա զարդարանքների համար:
Ավագ չորեքշաբթի երեխաները դաստիարակների, խոհարարների հետ պատրաստում են հայկական կլոր գաթա, փոխինձ հալվա:

Ավագ հինգշաբթի՝ հետճաշիկից հետո երեխաները մի քանի տատիկների ու խոհարարների օգնությամբ թակիչով ծեծում են ծլած ցորենի ծիլերը, Հյութը քամում, խառնում են են ալյուրի շփոթին և դանդաղ խառնելով եփում են մեր ավանդական, նախապապերի, նախատատերի սիրած կերակրատեսակներից մեկը՝ ածիկը:

Ավատ ուրբաթ երեխաները մասնակցում են խնոցի հարելու արարողությանը (տեղերից մեկում `որտեղ կա խնոցի):

Ավագ շաբաթ օրը երեխաները դաստիարակի հետ այցելում են հացատուն, և ականատես լինում թոնրի մեջ հաի թխման արարողությանը: Նրանք երգում են «լավաշ ենք թխում երգը», ճաշակում հյուրասիրված հացն ու պանիրը, վերցնում են լավաշները և վերադառնում մանկապարտեզ: Այդ օրը երեխաները դաստիարակի օգնությամբ սոխի կճեպներով ու այլ նյութերով ներկում են պաշաժ ձվերն ու նկարազարդում դրանք: Բոլորը անհամբերությամբ սպասում են կիրակի օրվան՝ Զատիկին: Երեխաները ուռենու ճյուղերով, Զատիկի թեմայի նկարներով, կոլաժներով զարդարել են դահլիճն ու մուտքը: Սեղաններին հայկական ուտեստներն են ` լավաշ, պանիր, ածիկ, հալվա, գաթա, փոխինձ, չամչով փլավ, գունավոր ներկած ձվեր, տապակած կանաչեղեն. Սկսվում է հանդեսը: Երեխաները արտասանում են տերունական աղոթքը: Այնուհետև ավետում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և հնչում է պատասխանը՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»: Դաստիարակը վառում է մոմերը, երեխաները երգում, արտասանում են տոնի խորհդին վերաբերող ոտանավորներ, հանելուկներ: Մեծ ոգևորություն է տիրում դահլիճում, երբ երեխաները երգում են, արտասանում, գուշակում հանելուկները և սկսվում է ձվերի խաղը՝

Միջոցառումն ավարտվում է հայկական ժողովրդական ազգային պարերի կատարմամբ, որին մասնակցում են բոլորը:

Հրաշալի տրամադրությամբ ավարտվում է մեկշաբաթյա միջոցառումը: Այդ ընթացքում երեխան գործում է ազատ անկաշկանդ ինքնավստահ: Երեխաների մեջ ձևավորվում է ինքնագնահատականը և ինքնահաստատումը:

Պարապմունքի թեմա՝ «Սուրբ Զատիկ»

Տեսակը՝ Ինտեգրված

Խումբ՝ Ավագ

Տևողությունը՝ 25-30րոպե

Նպատակը՝ Երեխաներին հաղորդել գիտելիքներ՝ազգային և կրոնական ծեսերից՝Սուրբ Զատիկի մասին, զարգացնել թիմային և զույգերով աշխատելու կարողություններ, սովորեցնել խմբային աշխատանքի պարզ կանոններին, հարստացնել բառապաշարը նոր բառերով ու բառակապակցություններով:

Անհրաժեշտ պարագաներ՝ խմբասենյակի պատերին փակ փակցված են «Զատիկ» պատկերով պաստառներ, կանաչ խոտեր բացիկներ, որոնց մեջ երեխաները պետք է օրվա վերջում դասավորեն իրենց ներկած ձվերը, ուռենու ճյուղերը զատկական կերակրատեսակները.

Աշխատանքային կենտրոններում՝ խոհարարիի հագուստ, գլխարկ,ջրաներկ, ձվիկներ, պլաստիլին, ձվի կճեպներ, ջուր, ալյուր,ձու և գրտնակ:

Պարապմունքի ընթացքը՝ պարապմունքը սկսում ենք հանելուկներով:
Այն ինչն է այն ինչը, շնչավորից անշունչ կելնեն
անշունչից էլ շնչավոր

———

Այն ինչն է ինչը, այսօր կլոր՝ մարմար քար
Վաղը կթռչի վեր ու վար

Դաստիարակը տեղեկություններ է տալիս տոնի մասին հարց ու պատասխանի միջոցով ճշտում է երեխաների գիտելիքները տոնի մասին

Աշխուժացնող խաղ՝

Երեխաները կծկված տեղավորվում են գետնին՝

Ձվիկ-ձվիկ ձվեղեն

Դե կոտրվիր կեղևեն

Որ դուրս ելնի քո ներսեն

փոքրիկ ճուտիկը դեղին

Երեխաները անշարժ վիճակից սկսում են թափահարել թևերը ծվծվալով

Դե ճուտիկներ իմ սիրուն

Մնացեք դու ձեր բակում

Թե չէ փիսոն փողոցեն

Մյաու՛ մյաու՛ մյաու՛

Երեխաները խուճապահար փախչում են իրենց տեղերը:

Դաստիրակը երեխաներին առաջարկում է ներկայացնել զատկանման տոնի ավանդական ուտեստները: Յուրաքանչյուր թմից մեկը ներկայացնում է ձու ներկելու խորհուրդը, կապված լեգենդը, որից հետո կատարում են զույգերով աշխատանք: Յուրաքանչյուրը իր կողքինին պատմում է թե իրեն ինչով դուր եկավ լեգենդը: Ներկայացնում են իրենց ընկերների կարծիքները:

Ներկայացնել Զատկական խաղերից մի քանիսը.

1. «Զվակռիվ» խաղում են զույգերով՝ կռվացնելով ձվերը

2. «Զվարշավ» խաղում են 4 հոգով, թեք տարածքց գլորում են ձվերը, ում ձուն ավելի հեռու գլորվի նա համարվում է հաղթող

3. «Ձու սեղմոցի» խաղում են պատանիները, գրազ են բռնում, թե ով կկոտրի հում ձուն.

4. «Ձու պտտոցի» ձվերը պտտեցնում են հոլի նման ում ձուն երկար պտտվի, նա համարվում է հաղթող և հավաքում է մյուսների ձվերը:

Աշխատանքները աշխատանքային կենտրոններում

Խոհանոցային կենտրոն – թխել Զատիկի գաթա. Երեխաները դաստիարակի օգնությամբ նախապես յուրացնում են բաղադրատոմսը. ապա սկսում են պատրաստել: Երեխաները ունեն խոհարարի հագուստ և գլխարկներ:

Գրաճանաչողության կենտրոն – Պատրաստելը տոնի նվիրված պատի թերթ. Երեխաները տարբեր նյութերով ձևավորում են թերթը: Դրանից հետո մեծահասակին թելադրում Զատիկի թեմայով իրենց իմացած ոտանավորներն ու ասացվածքները:

Բնագիտության կենտրոն - Ձարդել հում ձուն և ուսումնասիրել դրա կառուցվածքը:

Մաթեմատիկայի կենտրոն - Ցորենի հատիկներով կառուցել 5 ձու, աճման և նվազեցման կարգով: Խնդիրների լուծումը 10-ի սահմանում:

Արվեստի կենտրոն - Ձրաներկով նկարազարդում են դատարկ ձվի կճեպի վրա, խմորից ծեփել ձվեր, կերտաձողերով նախշազարդել հետո ներկել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային տոների ծեսերի, միջոցառումների անցկացմամբ դեռևս նախադպրոցական տարիքում հիշարժան են դառնում ուղեկցելով նրանց ողջ կյանքի ընթացքում: Հայկական ծեսերը, ազգային ավանդություններն ու սովորությունները կյանքի առաջընթացի և տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջանում աստիճանաբար դուրս են մղվում մեր կենցաղից: Տարիների ընթացքում դառնում հիշողություն.
Ցավալի է. Բայց փաստ է, որ այժմ արդեն շատ ու շատ ազգային տոներ ու ծիսակատարություններ անցել են մոռացության գիրկը,դառնալով միայն ավագ սերնդի հիշողություն: Այդ պատճառով շատ եմ կարևորում մեր՝ մանկավարժներիս դերն ու նպատակը նախադպրոցական երեխաների հայեցի դաստիարակության, կրթության, գեղագիտական, ազգային ակունքների պատմական անցյալը իմանալու, ճանաչելու, պահպանելու և այն սերնդե-սերունդ փոխանցելու համար:

Օգտագործված գրականություն

1. 5-6 տարեկանների կրթական համալիր ծրագիր
2. «Բարև փոքրիկ» Ասյա Հովհաննիսյան, Լուսինե Ղուլումչյան
3. «Նախաշավիղ» 2010թ. 5-րդ համար
4. «Նախաշավիղ» 2011թ